ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 51

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-60-րդ հոդվածների պահանջների, հիմք ընդունելով 2018 թվականի հուլիսի 11-ի դրությամբ կազմված հողի հարկի և գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքները և հաշվի առնելով, որ

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված ելակետային տվյալների՝ Պտղնի համայնքի 07-054-201-032 և 07-054-201-032 կադաստրային ծածկագրերը կրող անշարժ գույքերը՝ համապատասխանաբար՝ շինությունը և հողամասը, հանդիսանում են քաղաքացի Շուշան Պետրոսյանի սեփականությունը:

2. Համաձայն հարկային պարտավորությունների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների՝

1) 2018թվականի հուլիսի 11-ի դրությամբ Շուշան Պետրոսյանի կողմից համայնքի բյուջե վճարման ենթակա շինության գույքահարկը առ 2008-2018 թվականները կազմում է ընդհանուր առմամբ 699.188 ՀՀ դրամ, որից տույժ՝ 223.985 ՀՀ դրամ:

2) 2018 թվականի հուլիսի 11-ի դրությամբ Շուշան Պետրոսյանի կողմից համայնքի բյուջե վճարման ենթակա հողի հարկը առ 2008-2018 թվականները կազմում է ընդհանուր առմամբ 3.688 ՀՀ դրամ, որից տույժ՝ 1.147 ՀՀ դրամ՝ ***որոշում եմ.***

1. Շուշան Պետրոսյանից հօգուտ Կոտայքի մարզի Պտղնի համայնքի բյուջեի գանձել՝ 699.188 ՀՀ դրամ՝ որպես գույքահարկ (հ/հ 900105225354) և 3.688 ՀՀ դրամ՝ որպես հողի հարկ (հ/հ 900105225180):
2. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Շուշան Պետրոսյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. Հուլիսի 25
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2018թվականի N 52

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի N 15-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի օգոստոսի 14-ին Պտղնիի համայնքապետարանի շենքում կազմակերպել հանրային քննարկում՝ Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության նախնական փուլի վերաբերյալ:
2. Հաստատել Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության նախնական փուլի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարատ Տարիելի Պետրոսյանին՝
1) Հայաստանի հանրապետություն օրաթերթում և համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության նախնական փուլի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. Հուլիսի 30
գ.Պտղնի

Հավելված
Կոտայքի մարզի Պտղնի
համայնքի ղեկավարի 2018 թվականի
հուլիսի 30-ի N 52 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի «Պտղնի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 15-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2018 թվականի օգոստոսի 14-ին ժամը՝ 14^{00}-ից մինչև 15^{00}-ն Պտղնիի համայնքապետարանի շենքում կկայանա հանրային բաց լսումներ (քննարկում)՝ Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության նախնական փուլի վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:
Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության նախնական փուլի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել ptghni.kotayq@mta.gov.am կամ ptghnihamaynq@mail.ru էլեկտրոնային հասցեներով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ:

Համայնքապետարանի աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին: